



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» սեպտեմբերի 2025 թվականի N 1242-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Աշոտ Թաթուլի Վարդանյանի (ծնված՝ 1956 թվականի մայիսի 9-ին) և Սեդրակ Թաթուլի Վարդանյանի (ծնված՝ 1963 թվականի դեկտեմբերի 6-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր-2 այգետարածքի թիվ 51 տեղամասի թիվ 20 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, վավերացված 2025 թվականի մայիսի 30-ին, անհատ ձեռնարկատեր Արման Յուրիկի Ավետիսյանի կողմից 2025 թվականի օգոստոսի 26-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024NNS7ZC, մուտքագրված 2024 թվականի դեկտեմբերի 24-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արման Յուրիկի Ավետիսյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Աշոտ և Սեդրակ Թաթուլի Վարդանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր-2 այգետարածքի թիվ 51 տեղամասի թիվ 20 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 61,2 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 18,5 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 2,4 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 22.1-ին կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Աշոտ և Սեդրակ Թաթուլի Վարդանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր-2 այգետարածքի թիվ 51 տեղամասի թիվ 20 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,
որոշում եմ.

1.Աշոտ և Սեդրակ Թաթուլի Վարդանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր-2 այգետարածքի թիվ 51 տեղամասի թիվ 20 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 114-րդ թաղամաս, թիվ 20:

2.Աշոտ և Սեդրակ Թաթուլի Վարդանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 114-րդ թաղամասի թիվ 20 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 61,2 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 18,5 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 2,4 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:


3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աշոտ և Սեդրակ Թաթուլի Վարդանյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» սեպտեմբերի 2025 թվականի N 1243-Ա

ԱՍՅԱ ԲՐՈՅԱՆԻՆ ԵՎ ԱՇԽԵՆ, ՄԱՅԱ, ԳԵՎՈՐԳ ԽՈՒՄԱՐՅԱՆՆԵՐԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1. Ասյա Բրոյանին և Աշխեն, Մայա, Գևորգ Խումարյաններին տալ բնակելի տան վերակառուցման, վերնահարկի ավելացման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի թիվ 1 հասցեի հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:

2. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել Ասյա Բրոյանին և Աշխեն, Մայա, Գևորգ Խումարյաններին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» սեպտեմբերի 2025 թվականի N 1244-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ, ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ, ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Արտավազ Թաթույի Մնացականյանը (ծնված 1991 թվականի հունվարի 10-ին) սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղում գտնվող 07-057-0333-0116 կադաստրային ծածկագրով 1375,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին (վարելահող) կից գտնվող ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 07-057-0333-0184 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը՝ 355,2 քառ.մետր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ N 20022025-07-0141, տրված 2025 թվականի փետրվարի 20-ին, N 17092024-07-0007, տրված 2024 թվականի սեպտեմբերի 17-ին և N 03092025-07-0168, տրված 2025 թվականի սեպտեմբերի 3-ին):

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 8-ի թիվ 66-Ա որոշումը, ինչպես նաև այն, որ օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքի կամ ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով՝ ընդլայնվող հողամաս տրանսպորտային միջոցներով մուտք գործելու որևիցե այլընտրանքային հնարավորություն առկա չէ, բացի օտարվող հողամասից կամ ընդլայնվող հողամաս հնարավոր է մուտք գործել բացառապես օտարվող հողամասից, **որոշում եմ.**

1. Արտավազ Թաթույի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0333-0116 կադաստրային ծածկագրով 1375,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության ընդլայնվող հողամասին սահմանակից և ընդլայնվող հողամասի համար տրանսպորտային միջոցներով մուտք գործելու միակ հնարավորություն համարվող համայնքային սեփականություն հանդիսացող 355,2 քառ.մետր մակերեսով 07-057-0333-0184 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը՝ 4-րդ կարգի անջրդի վարելահողը, ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, օտարել այն փաստացի տիրապետող և օգտագործող Արտավազ Թաթույի Մնացականյանին՝ կադաստրային արժեքով:


2. Սահմանել, որ հողօգտագործողը սույն որոշման ընդունումից հետո, 10-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 19 714 (տասնինը հազար յոթ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանին՝ հողօգտագործողի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում հողօգտագործողի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 10-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արտավազդ Թաթուլի Մնացականյանին որոշման ընթացքի մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 5
գ. Զրկեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1245-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի N 15-Ա որոշումը և հաշվի առնելով Սամվել Ալեքսանի Լալայանի խնդրանքը, **որոշում եմ**.


1. Սամվել Ալեքսանի Լալայանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0203-0010 կադաստրային ծածկագրով գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 06082025-07-0168) տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 203-րդ թաղամաս, թիվ 10:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Ալեքսանի Լալայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 08
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1246-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԼՍՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0160 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստով Լիլիթ Կարենի Ասատրյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերի վերանայումը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ /11/2187-2025 գրության՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից կատարվել է շրջայց, ինչի արդյունքում պարզվել է, որ Լիլիթ Կարենի Ասատրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0160 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ:

Նշված փաստի առթիվ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2025 թվականի օգոստոսի 12-ին կազմվել է վարչական իրավախախտում կատարելու մասին թիվ 40 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու առթիվ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման նպատակով վարչական մարմինը 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հրավիրել է վարչական վարույթի լսումներ, որի վերաբերյալ ծանուցումը փոստային առաքման միջոցով ուղարկվել է ենթադրյալ իրավախախտում կատարած անձին (հիմք՝ թիվ LO129284025AM փոստային ծանուցագիրը):

Հրավիրված վարչական վարույթի լսումը հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժի համայնքապետարանը մինչ վարչական վարույթի լսման օրը չի ստացել հետադարձ փոստային ծանուցագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-39-րդ, 47-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, ինչպես նաև կողմին իր իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով **որոշում եմ՝**

1. Լիլիթ Կարենի Ասատրյանի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հարուցված վարչական վարույթի լսման օրը հետաձգել:

2. Վարչական վարույթի լսման օր նշանակել 2025 թվականի սեպտեմբերի 18-ը:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Լիլիթ Կարենի Ասատրյանին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Վարդանյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Կարենի Ասատրյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1247-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԼՍՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0161 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստով Միքայել Արամի Հովսեփյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերի վերանայումը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

Համաձայն «Գազարում Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ /11/2187-2025 գրության՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից կատարվել է շրջայց, ինչի արդյունքում պարզվել է, որ Միքայել Արամի Հովսեփյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0161 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ:

Նշված փաստի առթիվ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2025 թվականի օգոստոսի 12-ին կազմվել է վարչական իրավախախտում կատարելու մասին թիվ 39 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու առթիվ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման նպատակով վարչական մարմինը 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հրավիրել է վարչական վարույթի լսումներ, որի վերաբերյալ ծանուցումը փոստային առաքման միջոցով ուղարկվել է ենթադրյալ իրավախախտում կատարած անձին (հիմք՝ թիվ LO129278713AM փոստային ծանուցագիրը):

Հրավիրված վարչական վարույթի լսումը հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժի համայնքապետարանը մինչ վարչական վարույթի լսման օրը չի ստացել հետադարձ փոստային ծանուցագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-39-րդ, 47-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, ինչպես նաև կողմին իր իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորություն ընձեռնելու նպատակով **որոշում եմ՝**

1. Միքայել Արամի Հովսեփյանի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հարուցված վարչական վարույթի լսման օրը հետաձգել:

2. Վարչական վարույթի լսման օր նշանակել 2025 թվականի սեպտեմբերի 18-ը:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Միքայել Արամի Հովսեփյանին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Վարդանյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միքայել Արամի Հովսեփյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09

գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1248-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԼՍՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0147 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստով Գալուստ Սևակի Գալստյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերի վերանայումը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ /11/2187-2025 գրության՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից կատարվել է շրջայց, ինչի արդյունքում պարզվել է, որ Գալուստ Սևակի Գալստյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0147 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ:

Նշված փաստի առթիվ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2025 թվականի օգոստոսի 12-ին կազմվել է վարչական իրավախախտում կատարելու մասին թիվ 38 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու առթիվ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման նպատակով վարչական մարմինը 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հրավիրել է վարչական վարույթի լսումներ, որի վերաբերյալ ծանուցումը փոստային առաքման միջոցով ուղարկվել է ենթադրյալ իրավախախտում կատարած անձին (հիմք՝ թիվ LO129278606AM փոստային ծանուցագիրը):

Հրավիրված վարչական վարույթի լսումը հետաձգվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժի համայնքապետարանը մինչ վարչական վարույթի լսման օրը չի ստացել հետադարձ փոստային ծանուցագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-39-րդ, 47-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, ինչպես նաև կողմին իր իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով **որոշում եմ՝**

1. Գալուստ Սևակի Գալստյանի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հարուցված վարչական վարույթի լսման օրը հետաձգել:

2. Վարչական վարույթի լսման օր նշանակել 2025 թվականի սեպտեմբերի 18-ը:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գալուստ Սևակի Գալստյանին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Վարդանյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գալուստ Սևակի Գալստյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09

գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1249-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԼՍՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0151 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստով Գոհարիկ Էդիկի Սուքիասյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերի վերանայումը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

Համաձայն «Գազարում Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ /11/2187-2025 գրության՝ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից կատարվել է շրջայց, ինչի արդյունքում պարզվել է, որ Գոհարիկ Էդիկի Սուքիասյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0151 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ:

Նշված փաստի առթիվ Ջրվեժի համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2025 թվականի օգոստոսի 12-ին կազմվել է վարչական իրավախախտում կատարելու մասին թիվ 36 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու առթիվ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման նպատակով վարչական մարմինը 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հրավիրել է վարչական վարույթի լսումներ, որի վերաբերյալ ծանուցումը փոստային առաքման միջոցով ուղարկվել է ենթադրյալ իրավախախտում կատարած անձին (հիմք՝ թիվ LO129283907AM փոստային ծանուցագիրը):

Հրավիրված վարչական վարույթի լսումը հետաձգվում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժի համայնքապետարանը մինչ վարչական վարույթի լսման օրը չի ստացել հետադարձ փոստային ծանուցագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-39-րդ, 47-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, ինչպես նաև կողմին իր իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորություն ընձեռնելու նպատակով **որոշում եմ՝**

1. Գոհարիկ Էդիկի Սուքիասյանի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 08-ին հարուցված վարչական վարույթի լսման օրը հետաձգել:

2. Վարչական վարույթի լսման օր նշանակել 2025 թվականի սեպտեմբերի 18-ը:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Վարդանյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 09

գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1250-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն, որ քաղաքացի Աշոտ Ռազմիկի Հարոյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0155 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Աշոտ Ռազմիկի Հարոյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Աշոտ Ռազմիկի Հարոյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Աշոտ Ռազմիկի Հարոյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Աշոտ Ռազմիկի Հարոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 08
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1251-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն, որ քաղաքացի Քնարիկ Հարությունի Խուրշուդյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0157 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Քնարիկ Հարությունի Խուրշուդյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Քնարիկ Հարությունի Խուրշուդյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Քնարիկ Հարությունի Խուրշուդյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Քնարիկ Հարությունի Խուրշուդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 08
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 1252-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն, որ քաղաքացի Ռիմա Միքայելի Մակյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0149 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Ռիմա Միքայելի Մակյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Ռիմա Միքայելի Մակյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Ռիմա Միքայելի Մակյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Ռիմա Միքայելի Մակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 08
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2025 թվականի N 1253-Ա

ՎԻԳԵՆ ԿԵՐԻԿՈՒՐԻ ՂԱՀՐԵՄԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, **որոշում եմ**.

1. Թույլատրել Վիգեն Կերիկուրի Ղահրեմանիին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 51-րդ փողոցի թիվ 14 հասցեի հողամասում 2023 թվականի հուլիսի 31-ի թիվ 166 շինարարության թույլտվությամբ տրված մեկ հարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 9-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վիգեն Կերիկուրի Ղահրեմանիին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2025 թվականի N 1254-Ա


ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 16022023-07-0071 վկայականը, տրված 2023 թվականի փետրվարի 16-ին և հաշվի առնելով քաղաքացի Արթուր Ներսեսի Ազատյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Թույլատրել Արթուր Ներսեսի Ազատյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 18 հասցեի հողակտորում 2023 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 220 շինարարության թույլտվությամբ տրված նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և ծածկարանի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Ներսեսի Ազատյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 9
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2025 թվականի N 1255-Ա

ԱՆԺԵԼԻՏԱ ԷԴԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Անժելիտա Էդիկի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 81 հասցեի հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 08012025-07-0162 վկայականում նշված թիվ 2 հարթակը՝ 2.84 քառ.մետր մակերեսով:


2. Անժելիտա Էդիկի Ալեքսանյանին տալ կցակառույց օժանդակ շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 81 հասցեի հողամասում:

3. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Պարտավորեցնել Անժելիտա Էդիկի Ալեքսանյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2025 թվականի N 1256-Ա

ԱՐՄԻՆԵ ԷԴՈՒԱՐԴԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Արմինե Էդուարդի Հայրապետյանին տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամասի թիվ 1 հասցեի հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:


2. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել Արմինե Էդուարդի Հայրապետյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 9
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2025 թվականի N 1257-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լիլյա Մկրտիչի Գեոկչակյանի (ծնված՝ 1955 թվականի հուլիսի 6-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ զանգվածի 46-րդ թաղամասի թիվ 14 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31102019-07-0091 վկայական, տրված 2019 թվականի հոկտեմբերի 31-ին, «Երիցուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի նոյեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնական կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024YZLUXS, մուտքագրված 2024 թվականի նոյեմբերի 7-ին):

